«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐ
ՀՐԱՄԱՆ

«18» ապրիլի 2022թ. **N 228-Լ**

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ՊՐՈՖԵՍՈՐԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի կանոնադրության 54-րդ կետի 14-րդ ենթակետը և Գիտական քարտուղար Ա. Չատինյանի 15.04.2022թ.-ի զեկուցագիրը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամում հայտարարել պրոֆեսորադասախոսական անձնակազմի դրամաշնորհային գիտական նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ կամ Նախագծեր) մրցույթ:
2. Նախագծերի մրցույթի համար սահմանել հետևյալ պայմանները՝
   1) Նախագծերի պատրաստման ժամկետ՝ ս.թ. ապրիլի 15-ից մինչև հունիսի 17-ը,
   2) Նախագծերի գիտական հայտերի հանձնման վերջնաժամկետ՝ ս.թ. հունիսի 17-ի ժամը 16^{00} ներառյալ,
   3) Նախագծերի հաշվառման և գիտական փորձաքննության համար հայտերը թղթային տարբերակով ներկայացնել Գիտահամակարգող բաժին կամ էլեկտրոնային տարբերակով ուղարկել eranuhi.simonyan@sportedu.am էլեկտրոնային հասցեին,
   4) Նախագծերի իրականացման ժամկետ՝ 2 ուսունական տարի 2022-2023 և 2023-2024,
   5) Նախագծի իրականացման վերջնաժամկետ՝ 2024 թվականի հունիսի 14,
   6) Նախագծի ընդհանուր բյուջե՝ 4,000,000 (չորս միլիոն) ՀՀ դրամ, որից առավելագույն 80%-ը աշխատավարձ, իսկ 20%-ը՝ Նախագծի շրջանակներում այլ ծախսեր,

7) Նախագծերի համար հայտարարված մրցույթի արդյունքների ամփոփում՝ ս.թ. հունիսի 20-ից հուլիսի 01-ը:

8) Նախագծերը կազմելիս առաջնորդվել Գիտական խորհրդի 2022 թվականի մարտի 29-ի նիստում հաստատված փաստաթղթերի ձևաչափերով:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

ԴԱՎԻԹ ԽԻԹԱՐՅԱՆ

ՌԵԿՏՈՐ Signed by: KHITARYAN DAVIT 3002700193 ԴԱՎԻԹ ԽԻԹԱՐՅԱՆ